

2016թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու
կանխատեսումը ՀՀ-ում

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը
1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2016թ. - 31.12.2016թ.

Թեմայի ղեկավարը

Տիգրանյան Իշխան Տաճատի

տ.գ.թ., պրոֆեսոր

Թեմայի մասնակիցներ

1. Հովհաննիսյան Հայկազ Սուրենի- գիտաշխատող
2. Վարդանյան Քնարիկ Ջոնիկի - գիտաշխատող
3. Ավագյան Գայանե Արամի - գիտաշխատող
4. Տիգրանյան Վարսիկ Իշխանի -գիտաշխատող
5. Մխիթարյան Լուսինե Կարենի - գիտաշխատող
6. Մուրադյան Լուսինե Վարուժանի- գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ տնտեսական աճի խթանման տեսանկյունից նախկին մեխանիզմներն ՀՀ-ում գործում են ոչ այնքան արդյունավետ: Եթե նախկինում այդ աճը ձեռք էր բերվում հիմնականում գոյություն ունեցող կարողությունների և ենթակառուցվածքների շահագործման հաշվին, ներկայում այդ աղբյուրները սպառված են: Բացի այդ, նախորդ տարիներին բնակչության տարբեր խմբերի եկամուտների բևեռացման աստիճանի մեծացումը հանգեցրել է սպառման կառուցվածքի բացասական փոփոխությունների: Սա ուղեկցվում է ներմուծվող ապրանքների հարաբերական ավելացմամբ արտահանման նկատմամբ, հետևաբար, առևտրային և վճարային հաշվեկշիռների վատթարացմամբ:

Մակրոտնտեսական իրավիճակի բարելավման գործընթացում առավել կարևորվում են այնպիսի գերակա ճյուղեր, ինչպիսիք են արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Սակայն այս ճյուղերի զարգացման դինամիկան մտահոգիչ է: Վերջին երեք տարիներին (2012-2014թթ.) արդյունաբերության մասնաբաժինը ավելացված արժեքում (18,0%) և ՀՆԱ-ում

(16,0%) չի փոխվում: Նախորդ տարվա նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թիվը 2014թ.-ին ավելացել է ընդամենը 15 միավորով, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալը՝ 2,7 տոկոսով, նախորդ տարիների 6,9 (2013թ.) և 8,8 (2012թ.) տոկոսների դիմաց: Այսպիսի ցածր տեմպերը թույլ չեն տալիս ավելացնել արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, որն էլ իր հերթին չի կարող նպաստել գործազրկության մակարդակի կրճատմանը: 2014 թվականին արդյունաբերության մեջ աշխատողների թվաքանակը նույնիսկ կրճատվել է:

Թվում է, թե ավելի բարվոք վիճակում է գտնվում գյուղատնտեսության ոլորտը: 2010թ. անբարենպաստ տարուց հետո (նախորդ տարվա նկատմամբ արտադրանքի ծավալը կրճատվեց 13,6%-ով) մինչև 2014թ. ներառյալ տարբեր տարիների տեղի է ունեցել 7,1-13,9% արտադրության ծավալների աճ: Մակայն սա ավելի շատ կարելի է վերագրել բնակլիմայական պայմաններին, քան այս ոլորտի բարեփոխումներին: Դրա մասին է վկայում այն փաստը, որ այդ տարիներին գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 2010 թվականի 2 101 հազ. հա-ից կրճատվել են և 2014թ. կազմելով 2 049 հազ. հա: Գյուղատնտեսական արտադրանքի 97,2 տոկոսը ապահովում են գյուղացիական մանր տնտեսությունները և միայն արտադրանքի 2,8 տոկոսն է թողարկվում առևտրային կազմակերպությունների կողմից: Վերջին 5-6 տարիներին գյուղատնտեսության մեջ տրակտորների թիվը ավելացել է ընդամենը 200-ով, բեռնատար ավտոմեքենաների թիվը կրճատվել է, կոմբայնների և խոտհնձիչների թիվը չի փոխվել: Այսպիսի նյութատեխնիկական բազայի պայմաններում խոսել ճյուղում առաջընթացի մասին իրական չէ:

ՀՀ-ում գնաճային վերջին զարգացումներն ընթանում են գյուղատնտեսական արտադրության դինամիկային համապատասխան: Երբ 2010 թ. գյուղատնտեսական արտադրությունը իրական արտահայտությամբ կրճատվեց 16.2 տոկոսով, գնաճը 2011 թ. սկզբում հասավ երկնիշ ցուցանիշի: Գյուղատնտեսության վերականգնման արդյունքում գները սկսեցին աստիճանաբար իջնել, որի շնորհիվ 2011-2014թթ. գնաճը գտնվել է Կենտրոնական բանկի նպատակադրած թիրախային մակարդակի սահմաններում: Այստեղ գոյություն ունի որոշակի հակասություն: Միջազգային պարենային ապրանքների գների ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա ընթացքում աննշան է, որը ունի պարզաբանման կարիք: Շատ ապրանքների գների շարունակական նվազման պայմաններում Հայաստան ներկրվող ապրանքների գների համապատասխան փոփոխություններ չեն գրանցվում:

Այս հիմնահարցերի քննարկումը աշխատանքի կարևոր ուղղություններից մեկն է:

Ուսումնասիրելով ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան նախաճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածներում, պարզվել է, որ այս երկու ժամանակահատվածները միմյանցից տարբերվում են ոչ միայն տնտեսական աճի տեմպերով, այլև բովանդակությամբ: Բանը նրանումն է, որ 2000-2008թթ. ընթացքում տնտեսական աճը ուղեկցվել է բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի միջին տարեկան ծավալների մոտ 6 անգամյա աճով և մեկ շնչին ընկնող եկամուտների ու սպառողական ծախսերի աճը ուղեկցվել է ծայրահեղ աղքատ և աղքատ բնակչության տեսակարար կշռի էական նվազմամբ: Աղքատության մակարդակը 2008թ.-ին կազմել 27,6%, 1999 թվականի 50,0%-ի դիմաց:

Այնինչ, հետճգնաժամային տնտեսական աճը չի ուղեկցվում նման զարգացումներով: Ավելին, այդ տարիներին, 2008թ. համեմատ մեծացել է աղքատների տեսակարար կշիռը: Բացի այդ, եթե մինչև 2008թ. Ջինիի գործակիցը 0,395-ից նվազել էր մինչև 0,339, վերջին տարիներին այն նորից վերադառնում է նախկին մակարդակին: Դա նշանակում է, որ ՀՆԱ դրական աճի տեմպերը, որոնք ձեռք են բերվել հետճգնաժամային տարիներին, ոչ միայն չեն նպաստել աղքատության կրճատմանը, այլև խորացրել են աղքատ և հարուստ խավերի միջև եկամուտների տարբերությունը:

Աղքատության հաղթահարման տեսանկյունից հետազոտությունում կարևորվելու են աշխատանքի շուկայի ուսումնասիրությունները: Աշխատանքային ռեսուրսների կազմի և կառուցվածքի փոփոխությունների վերլուծությունը ցույց է տվել, որ ճգնաժամից հետո նկատվում է աշխատանքային ռեսուրսների կրճատման միտումներ: 2014թ. աշխատանքային ռեսուրսների թիվը կազմել է 2 180,2 հազ. մարդ, 2001թ. 2 406 հազ. մարդու դիմաց: ՀՀ աշխատանքի շուկայի ներկայիս առանձնահատկությունները և տիրող իրավիճակը պայմանավորված են նրա ձևավորման ժողովրդագրական և մակրոտնտեսական միջավայրով:

Ծնելիության ցածր մակարդակը, վերարտադրողական տարիքում գտնվողների արտագաղթը, կյանքի տևողության ավելացումը հանրապետությանը կանգնեցրել են ծերացման հիմնախնդրի առաջ: Ներկայում 65 և ավելի տարիքի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ-ում կազմում է 9,7%: Ըստ ՄԱԿ-ի սանդղակի 12%-ից հետո երկիրը համարվում է ծերացած:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Աշխատանքի բովանդակությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ տնտեսության իրական հատվածի գերակա ոլորտներ և արտաքին հատված: Հետազոտությունների նախորդ փուլերում իրական հատվածի գերակա ոլորտներից ընտրվել էր զբոսաշրջության ոլորտը, որպես ՀՀ տնտեսության ամենադինամիկ զարգացող բնագավառներից մեկը: Ուսումնասիրվել էր հիմնականում այս բնագավառի օրենսդրական դաշտը:

Այս փուլում անհրաժեշտ է խորացնել հետազոտությունը հատկապես բացահայտելով ագրոզբոսաշրջության զարգացման պայմանները և հնարավորությունները հանրապետությունում, մշակել միջոցառումների համալիր դրանք իրականացնելու նպատակով:

Ուսումնասիրվելու են արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները, առանձին ճյուղերի նպաստումները ոլորտի զարգացմանը և բացահայտել այդ զարգացման խոչընդոտները:

Նշենք, որ միջազգային պրակտիկայում, 2008թ. հուլիսի մեկից մակրոտնտեսական 14 ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության ինդեքսը:

Աշխատանքում վերլուծվելու են այս ցուցանիշները, դրանց բարելավման ռեզերվները բացահայտելու տեսանկյունից: Տնտեսական ճգնաժամերին հակազդելու համար աշխատանքում մշակվելու է այդ ցուցանիշների բաղադրիչների փոփոխությունները պայմանավորող գործոնների կառավարման այնպիսի համակարգ, որը կապահովի հավասարակշիռ տնտեսական աճ:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Վերջին տարիների ՀՀ տնտեսական իրավիճակը բնութագրվել է հետևյալ ընդհանուր միտումներով: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով 2009 թ. Հայաստանում արձանագրվեց 14,1 տոկոս տնտեսական անկում: Այդ տարի մասնավոր դրամական փոխանցումները կրճատվեցին 35, ներդրումները՝ 31, իսկ շինարարությունը՝ 41.6 տոկոսով: Կրճատվեց նաև տնային տնտեսությունների սպառման մակարդակը: Սակայն հարկաբյուջետային խթանման շնորհիվ, հնարավոր եղավ որոշ չափով չեզոքացնել անկման հետևանքները:

Ընդհանուր առմամբ համաշխարհային, մասնավորապես եվրոպական տնտեսության պահպանվող թուլության կոնտեքստում (Հայաստանի արտահանման 75 տոկոսը բաժին է ընկնում ոչ ԱՊՀ երկրներին) կարելի էր սպասել տնտեսական աճի տեմպերի նվազում: Հաշվի առնելով 2015թ. տնտեսական ցուցանիշների համադրումները և դրանց արդյունքում նկատվող դանդաղեցման միտումները, ԱՄՆ, ՀԲ և ՎՋԵԲ կոնսենսուս-կանխատեսմամբ 2016 թ. Հայաստանի համար հաշվարկվել էր 2.0 տոկոս տնտեսական աճ:

Տնտեսության թուլացման միտումներ են նկատվում նաև Ռուսաստանի դաշնությունում, որը հանդիսանում է դրամական փոխանցումների և ուղղակի օտարերկրյա ներդրումների հիմնական աղբյուր: Ռուբլու արժեզրկումը հանգեցրել է ՀՀ ապրանքների մրցունակության նվազմանը ռուսական շուկայում և արտահանման խոչընդոտներից մեկն է: Համապատասխանաբար գոյություն ունի ներքին պահանջարկի թուլացման լրացուցիչ ռիսկ, ինչպես սպառողական՝ պայմանավորված դրամական փոխանցումներով, այնպես էլ ներդրումային, որը ճգնաժամից հետո մնում է ցածր մակարդակի վրա:

Նշված հիմնախնդիրները կուսումնասիրվեն հետազոտության տարբեր բաժիններում, որը հնարավորություն կտա ճշգրտումներ մտցնել մշակվող տնտեսական քաղաքականության մեջ՝ հաշվի առնելով առավել մեծ վտանգներն ու ռիսկերը:

Հետազոտության արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված մենագրություն, գիտական հոդվածներ, զեկուցումներ գիտաժողովներում և սեմինարներ:

